

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՐԱՆԻ ՎԵՐԱԿԱՏՈՒՄ 1000 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՐԱՆԻ ՎԵՐԱԿԱՏՈՒՄ 103

Ապամոնտաժման որոշումը նախարարությունն ընդունել էր Սամխարաուլու անվան փորձագետների բյուրոյի կողմից ընդունված եզրակացության հիման վրա: Հիշեցնենք, որ թիվ 103 հանրային դպրոցի աշակերտները նոր ուսումնական տարին ժամանակավորապես կշարունակեն թիվ 157 հանրային դպրոցում: Ապամոնտաժումից հետո թիվ 103 դպրոցի տարածքում կկառուցվի նոր, արդի չափորոշիչներին համապատասխան 1000 աշակերտի համար նախատեսված դպրոց:

Նախարարությունը Թբիլիսիի քաղաքապետարանի հետ վթարային վիճակում գտնվող շենքի հարցով անհրաժեշտ բոլոր միջոցառումներն իրականացրեց կարճ ժամանակահատվածում: Նոր դպրոցի շինարարության գործում նախարարությունն ակտիվորեն համագործակցում է քաղաքապետարանի հետ:

Օգոստոսի 15-ին Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Թամար Սանիկիձեն եւ Թբիլիսիի քաղաքապետ Դավիթ Նարմանիան եղան թիվ 103 դպրոցի տարածքում, հանդիպում ունեցան տեղի բնակիչների հետ եւ պատասխանեցին նրանց հետաքրքրող հարցերին: